ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս, 0231-6-09-36

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2018 թվականի N 50

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի 71-Ն որոշման 2-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի <<Համայնքի 2018 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 71-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Կ.ՍԻՄՈՆՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 23
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույս
համայնքի ղեկավարի Ժ/Պ-ի
2018 թվականի օգոստոսի 23-ի
թիվ 50 որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

01.1.1 խումբ ենթախմբի 4212 հոդվածն ավելացնել 1000.0/մեկ միլիոն/դրամով
01.6.1 խումբ ենթախմբի 4261 հոդվածն ավելացնել 400.0/չորս հարյուր հազար/դրամով
08.2.4 խումբ ենթախմբի 4239 հոդվածը պակասեցնել 1400.0 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամով :

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11 օգոստոսի 2018 թվականի N 23

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքում 2018 թվականի օգոստոսի 10-ին ժամը 21:00-22:00-ն ընկած ժամանակահատվածում ուժգին քամու և փոթորիկի հետևանքով ուսումնասիրություններ կատարելու և տուժած բնակիչներին հասցված վնասի չափը պարզելու նպատակով .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքում ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

2018 թ. օգոստոսի 11
գ.Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույս
համայնքի ղեկավարի Ժ/Պ
2018 թվականի օգոստոսի 11-ի
թիվ 23 կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Սիմոնյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար

Հանձնաժողովի անդամներ՝

Աննա Առաքելյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Շողիկ Պողոսյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Թամարա Պողոսյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ

Հովհաննես Նահապետյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքապետարանի աշխատակազմում տնտեսվար

Կարեն Մանուկյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքապետարանի աշխատակազմի վարորդ

Ասատուր Սերոբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքի ավագանու անդամ

Արթուր Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքի բնակիչ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 օգոստոսի 2018 թվականի N 24

ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշումը, Զարզանդ Գրիգորյանի 2018 թվականի օգոստոսի 13-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ղեկավար Զարզանդ Գրիգորյանին 2018 թվականի օգոստոսի 14-ից տրամադրել նախորդ տարիների չօգտագործված արձակուրդ՝ 34 աշխատանքային օր տևողությամբ:

2. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի հոկտեմբերի 2-ից:

3. Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ լիազորությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Սիմոնյանին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 14
գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

20 օգոստոսի 2018 թվականի N 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐՎԵՍՏՐ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի առաջին մասի 1 կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 14-ի թիվ 49 որոշումը և Անի Մնացականյանի 2018 թվականի օգոստոսի 13-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2018 թվականի օգոստոսի 23-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Մամիկոնյանի լիազորությունները վայր դնել:
2.2018 թվականի օգոստոսի 23-ից Անի Տիգրանի Մնացականյանի /անձն. AN 0616789, տրված 14.08.2013թ., 057-ի կողմից/ հետ կնքել անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր նշանակելով նրան որպես Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի <<Արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 20
գ. Արշալույս